

Թիւն էլ մնայ... Սպասենք, տեսնենք:
Անցեալ ամսին քաղաքի մի խումբ երիտա-
սարգներ, գնալով մեր գաւառապետի մօտ դի-
մել են, որ միջոցով բարձր իշխանութեան
առաջ Ախալքալաքում ևս, Թիֆլիսի նման, կի-
րակի օրերը խանութները և վաճառատները,
բոլորը անխափր, ամբողջ օրը փակվեն: Գաւա-
ռապետը օրով ընդունել է նրանց և յայտնել,
որ այդ մասին առևտրականների կողմից մի
գրաւոր խնդիրը ներկայացնեն: Այս օրերս ար-
դէն այդ խնդիրը ներկայացրել են, որը
ստորագրել են քաղաքի համարեա բոլոր վա-
ճառականները և խանութպանները: Մինչև այ-
սօր մեզանում կիրակի օրերը խանութները
փակվում են առևտրական ժամը 8-ից մինչև
12-ը, իսկ 12-ից յետոյ կրկին բաց են անում
և առևտուրը շարունակում:

Խ. Ղ.

ՆԱՄԱԿ ԽՍՐԱԿՐՈՒԹԵԱՆ

Անապա, օգոստոսի 21-ին

Թոյլ տաւէք ձեր թերթի միջոցով յայտնել,
որ ես ստացայ Անապայում տեղի աղօթատան
ծախսերը հոգալու համար պ.պ. Փ. Գաբրիել-
յանից և Ս. Պետրոսեանից 10-ական ր., Մ.
Մրտեքեանից, Ս. Գապարեանից, Մ. Թ-ից և
Անայոյ ունիից 5-ական ր. տ.տ. Ն. Տէր-Յով-
սէփեանից, Վ. Նւնադաւեանից, Ս. Էմիլեանից
և պ. Ն. Ալաքեանից 3-ական ր., պ.պ. Պ. Ռու-
սուկեանից և տ. Տ. Սերեբրեակեանից 2-ական
ր., պ.պ. Ն. Սոյանեանից, Հ. Մուրուքեանից,
Ի. Արաւոյից, Այվազեանից, Խ. Յովսէփեանից,
Ա. Սափարեանից, տ.տ. Այվազեանից,
Ի. Իսկենդրեանից, Ս. Տէր-Ասուկեանից, Վ.
Հուսիկեանից, Ի. Պետրոսեանից, Թ. Կոզմեան-
ից, Ա. Թանգոյեանից, Մ. Մատինեանից, Ե.
Ակոբեանից և Այվազեանից մի մի րուբլի—ըն-
դամենը 76 ր., որը և յանձնեցի ձեռնադր. Պո-
ղոս քահանայ Տէր-Միստոսեանից:

Իշխ. Մ. Քումանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Թիֆլիսի ֆիզիկական գիտարանը մօտ օրե-
րումս կը միացնի այն երկրաչափական
կայարանները, հետ, որոնք գտնվում են Բադ-
լում, Բաթումում, Ախալքալաքում, Բորժո-
մում և Շամախում: Դիտարանը կը միացնի
յիշված կայարանների հետ այժմ գոյութիւն
ունեցող հուսարանների միջոցով: Միացման
նպատակն է իւրաքանչիւր օր տեսնել կայա-
րանների ժամացոյցները և համապատասխա-
նեցնել նրանց Թիֆլիսի գիտարանի ժամացոյցի
հետ, այս հանգամանքը կարեւոր նշանակութիւն
ունի երկրի տատանումների տեղութիւնը ու-
րոշելու և արձանագրելու համար՝ երկրաչափ-
ների ժամանակ:

Շրջիկ կաթնարանը, որ գործում էր Դիլի-
ջանի շրջանում, այժմ անցել է Դարախիւղի
շրջանը: Գիրակի, օգոստոսի 24-ին. Դարախի-

թիւն տալու համար Անցեալ դարու սկզբում
հողի հեշկաման խորութիւնը հազիւ էր հաս-
նում 4 մետրանոցով, այժմ ամենաթեթեւ մշակ-
ման համար հարկաւոր է 8 մետրանոց, իսկ
ուժեղի համար 12—16. դա մի բնական ան-
հրաժեշտութիւն է խիտ բնակեցրած վայրերի
համար և դեռ ժամանակով հողի մշակման չեղար-
անելի պէտք է խորացնել, որի մէջ և կայա-
նում է գիւղատնտեսութեան ապագան. այ-
սօրինակ մի աշխատանք ոչ միայն մարդկային,
այլ և կենդանական ոյժը առաջ տանելին կա-
րող և օտարակց են տեղի տալ մեքենայական
ոյժին:

Գիւղատնտեսութեան էական առանձնայատ-
կութիւններից մէկն այն է, որ իւրաքանչիւր
մի աշխատանք իր անհետաձգելի ժամանակն
ունի և գլխաւորապէս այդ ժամանակներում
բանտարանում ոյժը շատ թանկ է գնահատվում,
իսկ եղած արդիւնքից կատարելապէս օգտվե-
լու համար անհրաժեշտ է որ վերոյիշեալ ժա-
մանակամիջոցում աշխատանքը վերջացնէ. այդ
դէպքում մեծ ծաւալութիւն են մատուցանում
արագաշարժ մեքենաները: Օրինակ վերցնե-
լու համար հեռու չը գնանք. նորերս ՎՂա-
կումս մի քանի գիւղերից լուսեր կային, որ
անակնկալ անձրևները փայտին դեռ չը հընձ-
ված արտերը և հնձված ու դաշտի վրա դիպած
խուրճերը, բաւական է, որ այդ գիւղերում
լինէին մի հնձող և մի կայտող մեքենայ, որ
խեղճ գիւղացիները իրանց հալալ վաստակի
տէրը դառնային:

Սե վերջապէս մարդկային ոյժի տեղի տալը
կենդանական ոյժին և վերջինս մեքենայակա-
նին հիմնված է աշխատանքի ժամանակներ և
լուսութեան վրա. այսպէս օրինակ, մի քանի
տասնհազ քանկները, չը նայած որ իրանց

չափում սկիզբ դրվեց կաթնարանի գործու-
նեցութեան Շրջիկ կաթնարանի ղեկավարու-
ր կարգաց մի գաւառապետութիւն և ցոյց տուեց սեր-
գատող մեքենայի կամ սեպարատորի գործա-
դրութիւնը: Դասախօսութեանը ներկայ էին
փոխ-նահանգապետ Նակաչիձէ, շրջակայ գիւ-
ղացիները և ամառանոց եկած անձինք: Կաթ-
նարանը պէտք է գործէ գիւղերում մի երկու
շաբաթ և վերջացնէ իր այս տարվայ գործու-
նեցութիւնը:

Պետերբուրգի կանանց ինստիտուտներում
առաջին անգամ է, որ մրցական քննութիւն-
ներ են սկսվում նոր մտնող ուսանողուհիների
համար, որովհետեւ ինստիտուտում տեղ չը կայ
մտնել ցանկացողների աւագին թիւ պատճա-
ռով:

Այս օգոստոս ամսի 7-ին, ինչպէս հաղոր-
դում են մայրաքաղաքի լրագրիչները, ներքին
գործերի մինիստրութիւնը, առանց որ և է
փոփոխութեան, հաստատել է Թիֆլիսի քա-
ղաքային վարչութեան կողմից ներկայացրած
նախագիծը՝ Թիֆլիս քաղաքը էլէկտրականու-
թեամբ լուսավորելու մասին:

Պատմական-լեզուագիտական ինստիտուտում
այստարարվեցին ուսանողների ընդունելու-
թեան հետաքննելու համար կուրսում խն-
դիրները էին: Թուրք 74 զինվորականներ,
որոնցից ընդունվեցին 15 և ռեմիտարիտներ
—18, որոնցից ընդունվեցին 9 հոգի:

Գաղափար բուսաբանական ցուցանադէպի
կոմիտէտը խնդրում է մեզ հաղորդել, որ ի
ցոյց դնելու համար գտնաւոր առնկներ, պը-
տուղներ, ընդդէմներ և ծաղիկներ օւղարկել
ցանկացող անձինք կարող են ուղարկել իրանց
էկզպոսատները ցուցանադէպի ամբողջ տեղ-
դութեան ժամանակ՝ մինչև այն օրը, երբ տե-
ղի կուսենայ մրցողական քննութիւնը:

Շուշուց մեզ հետագործում են. ձերէկ, օգոս-
տոսի 24-ին, երեկոյան թուրքերը սպանեցին
Միքայէլ Թամարեանից:

ՎՂախի երեկվայ համարում պատահմամբ
սպրդել է մի սխալ. Արարատի գլուխը բարձ-
րացող երեք անձերի շարքում պէտք է իշխի
ոչ Նւնադաւեանի, այլ Բիւրի Շարեյանի ա-
նունը:

Բազուի վաճառական Մ. Բունեանի
կառավարութիւնը թոյլ է տուել հիմնել մի
առևտրական-արդիւնաբերական ընկերութիւն
1,500,000 ռուբլի գրամագէտով:

ՂԱՄԵՆԻՍ ԳԻՒԼԻԳ (Բորչալու գաւառ) մեզ
գրում են. «Օգոստոսի 15-ին այստեղ պատա-

բաներով և թիակներով աւելի քիչ աշխատանք
են առաջ տանում, քան ներթադրեմք, մի զոյգ
կըր, բայց աւելի ծախք են պահանջում, քան
վերջինս, իսկ մեքենայ շատ ու շատ անգամ
քիչ. լաւ բաղադրված մի մեքենայ աւելի
ճշգրիտ և աւելի նպատակայարար ու կանո-
նաւոր կարող է առաջ տանել, քան մարդիկ և
նրանց տրամադրութեամբ տակ գտնվող կեն-
դանները:

Սե առաջ հիմնադրեցին են պատճառը,
որ մարդկային սերմող ձեռքի տեղ՝ սերմող
մեքենայ, մանաւորի և գեղանգի տեղ՝ հնձող,
կալի, կամի տեղ՝ կալող, արօրի, տափանի,
ցաքանի և գութանի տեղ չոգին է բռնել կամ
պէտք է բռնէ, իր յետեից քարշ տալով տեսա-
կանաւ մեքենաներ և դրանով դադարեցնէ թէ
մարդկային և թէ կենդանական ոյժը գիւղա-
տնտեսութեան մէջ. կան, ի հարկէ, դեռ ևս
աշխատանքներ, որոնց նկատմամբ մարդկային
ոյժը խիտ թանկ է գնահատվում, բայց դա
ժամանակաւոր է միայն, անկարող տեխնիկայի
զարգացման առաջ կանգնելու:

Վերջերս օկտեկ է էլէկտրականութիւնը ևս
մուտք գործել, որը աւելի մեծ ապագայ է խո-
տանում իր մի շարք յարմարութիւնների պատ-
ճառով, քան չոգէմեքենան. այն ինչ չոգէմե-
քենան իր ահագին ծանրութեան պատճա-
ռով դժուարացնում է տեղափոխութիւնը,
էլէկտրականը նրանից կրկնակի անգամ թեթե-
կարող է լինել և հարմարաւորապէս, չը նա-
յած, որ նոյն քաշելու ոյժն ունի, ինչ որ ա-
ռաջինը: Գարածուխով աղքատ երկրներում
նրա գործածութիւնը խիտ օգտաւէտ կ'ը դառ-
նայ և շատ ուրիշ յարմարութիւնների հետ հը-
նարաւոր կը լինի դաշտերը գիւղի ժամանակ
էլէկտրականութեամբ լուսավորել և շտապել:

հեց մէկ օպանութիւն: Մեր գիւղի բնակիչ
Յովսէփ և Դանիէլ Կախանցները վէճ ունեն
հողի մասին և գանգաւ էին տուել մեր գիւ-
ղական գաւառներին: Այսօր դատաւորները,
կամենալով բաւականութիւն տալ նրանց պա-
հանքին, մեր գիւղից ուղարկեցին դէպի այն
հողը, որի մասին նրանք վիճում էին: Դանիէլ
Կախանցը, տեսնելով, որ դատաւորները կա-
մենում են վճել գործը յօգուտ Յովսէփ Կա-
խանցի, հանում է հրացանը և արձա-
կում է Յովսէփ Կախանցի տղայի վրա,
առելով հետեւալ խօսքերը, «հա հա իմ
գանգաւան իմ ձեռքով կը վճեմ»: Գնա-
լը, գիւղացիով Յովսէփի տղայի կռանք,
կուրս կտորում է, որից նա վայր է ընկնում:
Երկին այդ միջոցին արձակում է հրացանը
Յովսէփի Կախանցի վրա. գնդակը գիւղացիով
Յովսէփի ճակատին՝ առնու ու տեղը մեռնում
է նրան: Դանիէլ Կախանցը այդպիսի փախ-
չում է: Այդ բոլորը տեղի ունեցաւ դատաւոր-
ների ներկայութեամբ:

ՆՕՂԱՅՍԻԿՑ մեզ գրում են. «Բաճուռի հա-
յոց աղօթատան Սարգիս աւագ քահանայ Մա-
սիմոնեանցը ամսին 17-ին գալով Նոյայոյ և
լրացնելով տեղի հայ հասարակութեան հոգևոր
պէտքերը, իր աղօթ. ժամանակից ջարդոնե-
րով կենդանութիւն տուեց թմրած ժողովրդին,
որը ահա մի ամբողջ տարի է ինչ մեր ծխա-
տէր հանգուցեալ քահանայի մահից յետոյ զուրկ
է հոգևոր հովիւից: Յարգելի տէր-հայրը, լինե-
լով զարգացած և ինտելիգենտ մի անձնաւո-
րութիւն, իր օտար պարուն է համարում գալ-
(նոյն իսկ առանց ճանապարհածախս օտանալու
տեղիս չքաւոր ժողովրդի) իր նախնի ծխա-
կաններին հոգևոր մխիթարութիւն պատճառե-
լու: Լինելով տեղիս հայ եկեղեցական հոգա-
բարձրութեան անդամ, յիշեալ քահանայ եւան-
դոն կերպով ներթաւան միջոցներ է որոնում
Նոյայոյի ապագայ հայ ծխապէր քահանայի
պահպանութեան համար»:

ՍԱՐԻՂԱՄԻՇԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի
22-ին այստեղ կառուցվող զինուորական հիւան-
դանոցի շինութեան մէջ տեղի ունեցաւ հետե-
ւեալ ցատակ դէպքը: Մշտի Վարդան անունով
մի պանդուխտ, որ բանում էր յիշեալ շինու-
թեան վրա 15 պարսից աւելի ծանրութեամբ
մի քար է շարվում և ընթանալով՝ յանկարծ
վայր է ընկնում և քարի պտտման առաջ
միջ տեղի ու տեղը անշնչանում է: Մղթա ու
բախտակից ընկերների օգնութիւնը այդ ժամին
անօգուտ են անցնում. օտարական զինատու-
թիւնից էլ երեսը, որ մահը առաջացել է գան-
գի ամբողջովին վնասումից: Այստեղ կարծի
ենք համարում շնչանել այն հանգամանքը, որ
գործը տալիս են զանազան անբարեխիղճ գիւղ-
րատներին և այդպիսով իրան ազատ համարում
իրանց վրա ընկած պատասխանատուութիւնից:

աշխատանքը առաջ առնել ինչ տեսակէտից
նայեմք և ընենք, կամաց կամաց կը գտնե-
այն երկրաչափութեան, որ գիւղատնտեսութեան
ապագան մեքենաներին է պատկանում, ի
հարկէ, մարդկային կարող մեքի թելադրու-
թեան տակ:

Մեքենաների ներմուծումը գիւղատնտեսու-
թեան մէջ կը տեսնենք հետեւեալ վիճակագրից:
Միասնապէս գիւղացիները կազմում են եղել
ամբողջ ազգաբնակչութեան 1876 թ. 1886 թ. 4)

51,4% 46,6%

Գնման արժեքով 1848 թ. 1900 թ. 5)

75% 85,7%

Միացեալ-Նահանգներում 1880 թ. 1890 թ.

50,25% 44,28%

Անգլիայում, տեխնիկայի հայրենիքում, գիւ-
ղացիների թիւը աւելի անմխիթար դրութեան
մէջ է, քան վերոյիշեալ բոլոր երկրներում:
Ուրեմն տեսնում ենք, որ մեքենաների գոր-
ծածութեան ազդեցութիւնից գիւղացի ազգա-
բնակչութիւնը պակասել է կամ, այսպէս ա-
ռած, դէպի ինդուստրիական քաղաքներն են
քաշվել: Պատճառը շատ պարզ է. նախ որ մե-
քենաներին տեղի է տուել հասարակ բանտը
դասակարգը, և երկրորդ՝ այն գիւղացին, որը
չէ կարողացել մեքենաներ ձեռք բերել և ու-
նեցած հողը կանոնաւոր արդիւնաբերել, տեղի
է տուել խոշոր դրամատէրերին: Ապագա-
յի մասը՝ պատկերը նկարագրելով, Փոն-դեր-
Պոլաց առաջարկում է պետութեան, որ արգել
որոշ գործիչներ գիւղատնտեսութեան մէջ, և
խորհուրդ է տալիս գրամատէրերին չը նեղել:

4) Von der Goits. Agrarwesen und Politik.
5) Kautsky. Agrarfrage.

իսկ անկախում փոքրագոյնները իրանց մի կօ-
պէկ շահը թանկ են գնահատում մարդկային
կեանքից, ստիպելով ու նոյն իսկ բռնաւարով,
որ թշուառ բանտը ուժից վեր գործ անէ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԻՍԻԻՆ

Ս Ի Օ Ն Ի Ձ Մ
IV

Կարճ ժամանակում սիւնիստական կազմա-
կերպութիւնը լայն ցանցեր է տարածում աշ-
խարհի բոլոր ծայրերում և բազմաթիւ է իր
կողմնակիցների թիւը: Իբրեւ ապացոյց բաւա-
կան է յիշել այն փաստը, որ համագումարնե-
րին մասնակցող պատգամաւորների թիւը տա-
րեցտարեւ աւելացել է զգալի չափով: Այսպէս
1897 թ. Բազելի առաջին համագումարին կա-
յին միայն 204 ներկայացուցիչներ, այն ինչ
յետոյ այդ թիւը հասաւ 1898 թ. Բազելի երկ-
րորդ համագումարում—280-ի, 1899 թ. եր-
րորդ համագումարում—370-ի, 1900 թ. Լոն-
դոնի համագումարում—420-ի, Հեռեկալ 1901
և 1902 թ. Եւրոպայի ինչ այդ թիւը բարձրա-
ցել է, իսկ ներկայ համագումարում—(Բազել-
լում), ինչպէս հաղորդում է «Berliner Tageb-
latt»-ը, նա արդէն հասել է 1000-ի:

Բաւական պատկանելի թիւ է դա, մանա-
ւանդ եթէ աչքի առաջ ունենանք, որ դրանք
սոսկ ժողովներ չեն, այլ կազմակերպված
խմբակների կողմից ընտրված պատգամաւոր-
ներ:

Այդ խմբակների բուն նպատակն է ազգային
ինքնապատրաստութիւն և ներթաւան աշակ-
ցութիւն «Հրէական թագաւորութիւն» հաստա-
տելու համար: Այդպիսի հրէայ անդամները հա-
մերայն ոյժերով ուսումնասիրում են իրանց
մայրենի լեզուն ու գրականութիւնը, օտ-
արում են նորանոր երգեր, խօսակցում են
ընթացիկ բազմազան հարցերի մասին և մերթ
ընդ մերթ հանգանակում են ներթաւան միջոց-
ներ: Իւրաքանչիւր անգամ պարտաւոր է վճա-
րել տարեկան ամենաքիչ մի «Շէ է կ ե», այս-
ինքն Ռուսաստանում—50 կոպ., միւս երկր-
ներում՝ 1 մարկ, 1 ֆրանկ կամ 1 չիլինի:
Այդպիսի անդամավճարով իւրաքանչիւր հրէայ
իրաւունք է օտանում մասնակցելու համագու-
մարի համար պատգամաւոր ընտրելու:

Սիւնիզմի կենտրոնական բարձրագոյն մար-
մինն է համագումարը, որը և իւրաքանչիւր
տարի ընտրւում է անցեալի գործերը, մշակում է
ծրագիր ապագայ գործունեութեան համար և
որոշ միտքներ է յանձնարարում այս կամ
այն մարդկանց:

Նրա պաշտօնական օրգանն է Վիեննայում
հրատարակվող «Die Welt» շաբաթաթիւթը:
Բացի դրանից կան գերմաներէն, ֆրանսերէն,
իտալերէն, անգլիերէն, լեհերէն և ուրեւրէն
բազմաթիւ թերթեր, որոնք միշտ ուրախու-

չը լինել գիւղացիների ձեռքից հողերը: Այն
խոշոր գիւղատնտէր, որ քաղաքական հար-
ցերի հետ կապ չունեցող հարցերը այնքան
մանրազնիւն քննել գիտէ, այստեղ արդէն ե-
րեսն է գալիս իր, ինչպէս գերմանացիներ են
առում ազգաբարձրաւորութեամբ. օտակայ այդ
խորհուրդները կը մնան ձայն բողբոջող ձայն
նպատակ, սրովիտեալ զուրկ են որ և իրա-
կա հիմքից: Այսօրվայ դրամատէրը ապագայի
մասին հող չէ տանում, թէ ինչից կարող են
պատահել, նրանք իրական օգուտն է, իսկ մե-
քենաները արգելել կընչանակի գիւղացիան
հայրենի և նրան չընտանի մէջ փակել, ինչ-
պէս օրաժիտ կերպով նկատում է Կառուս-
կին...:

Սեւապայում բոլորովին անկարելի էր այդ
ստորափնցող վտանգի առաջն առնել, քանի
որ հասարակութեան անհասկացիկ մէջ տնտե-
սական այլամտները ծայրահեղութիւնների վրա
էին, իսկ մեր մէջ մասամբ կարելի է մեղ-
մացնել այդ անխուսափելի վտանգը, քանի որ
մերայնների մէջ, ի հարկէ գիւղերում, քնակ-
յութիւնը, շատ քիչ տարբերութեամբ, մի և
նոյն ներթաւան ապահովութիւնն ունի: Սե այդ
միջոցը միայն ընկերակցական կազմակերպու-
թիւններն են: Սե մեթ մեզ համար թանկ ար-
ծէ մեր պապերի յիշատակներով լցված, հա-
զարաւոր տարիներ նրանց արիւնքով ներկված
երկրը, եթէ մեզ համար այդ սրբավայրերի
բաժանելը արհամարանք է մեր ամբողջ նախ-
նիքների հասցէին, որի մէջ և գտնվում է մեր
կորուստը, այն ժամանակ ամուր կաշնքը նրան
և երկարատեւ լինելու համար կաշնքը գիւ-
ղատնտեսական ընկերակցութիւններ:

Ուսումնող-երկրագործ
6) V. d. Goits. Landw. Betriebslehre.

Электротечатня Груз. Изд. Т—ва, Б. Ванская ул.